ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2017 թ. **N**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-150-09.10.2017-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1255 -Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-150-09.10.2017-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է գործող «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված «մշակութային արժեքներ» և «մշակույթ» հասկացությունները թողնել անփոփոխ՝ նկատի ունենալով հետևյալ հանգամանքները.

1. Համաձայն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ օրենքի գործողությունը տարածվում է մշակութային ժառանգության օբյեկտների (պատմամշակութային հուշարձանների) պահպանության, ուսումնասիրման, օգտագործման և հանրահռչակման վրա: Իսկ համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ են պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

Օրենքի 6-րդ հոդվածի «մշակութային արժեքներ» հասկացությունը ներառում է «մշակութային ժառանգության առարկա (օբյեկտ)»-ը՝ պատմամշակութային անշարժ ժառանգության հուշարձաններն ու նրանց համալիրները:

Այդ առումով հիմնավորման մեջ նշված Ջորաց քարեր պատմամշակութային տարածքը, ինչպես նաև պատմամշակութային, պատմաճարտարապետական, պատմահնագիտական և այլ

հուշարձաններն ու հուշարձանախմբերը, համալիրները, օրենքի 6-րդ հոդվածի «մշակութային արժեքներ» հասկացությանը համապատասխան, մշակութային ժառանգության օբյեկտներ են և օրենքով սահմանված կարգով ներառվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում:

Ինչ վերաբերում է հիմնավորման մեջ նշված «Գառնու սիմֆոնիային», ապա այն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշամբ հաստատված ցանկում՝ որպես «Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ:

2. «Մշակույթ» հասկացության սահմանման փոփոխությունը տեղին չէ, քանի որ օրենքում տրված սահմանումն արդեն իսկ լիարժեքորեն իր մեջ արտահայտում է նաև բնության նկատմամբ մարդու վերաբերմունքը: Հասարակության զգայություններն ու մտածողության եղանակների ամբողջությունը ձևավորվում են բնության և տիեզերքի վերաբերյալ գիտելիքների և պատկերացումների հիման վրա:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-150-09.10.2017-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 20-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում՝

1. 4-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մշակութային արժեքներ՝ մշակույթի եւ արվեստի երկեր, գեղարվեստական ժողովրդական ստեղծագործություններ եւ արհեստներ, բանահյուսություն, բարոյագիտական եւ գեղագիտական գաղափարատիպեր (իդեալներ), վարվեցողության կանոններ եւ ձեւեր, լեզուներ, բարբառներ եւ խոսվածքներ, ազգային ավանդույթներ եւ սովորույթներ, պատմաաշխարհագրական տեղանուններ, մշակութային գործունեության մասին գիտական հետազոտությունների արդյունքներ եւ մեթոդներ, մշակութային ժառանգության առարկաներ (օբյեկտներ), պատմամշակութային առումով եզակի տարածքներ.»:

2. 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Մշակույթ՝ հասարակության կյանքի նյութական եւ հոգեւոր ոլորտներում գործողությունների, զգայությունների եւ մտածողության եղանակների ամբողջությունն ու դրանց արժեքավոր արտահայտությունը, բնության նկատմամբ մարդու վերաբերմունքը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքումում լրացվող հոդվածի վերաբերյալ

Նախագծում առաջարկվել է՝ հոդված 6-ի «Մշակութային արժեքներ» պարբերության մեջ «մշակութային ժառանգության առարկաներ (օբյեկտներ)» բառերից հետո ավելացնել «պատմամշակութային առումով եզակի տարածքներ»: Նման լրացումը թույլ կտա մշակութային ժառանգության առարկաների (օբյեկտների) պետական ցուցակները կազմելիս (ինչը, նույն օրենքի հոդված 22-ի համաձայն՝ լիազորված պետական մարմնի իրավասությունն ու պարտականությունն է) առավել ամբողջական ու տեղայնացված մոտեցում ունենալ եւ այդ ցուցակում ընդգրկել, օրինակ, Գառնու Ժայռերի սիմֆոնիայի կամ Սյունիքի Զորաց քարերի նման տարածքներ:

Նույն հոդվածում «Մշակույթ» պարբերության մեջ «արտահայտությունը» բառից հետո առաջարկվել է ավելացնել՝ «բնության նկատմամբ մարդու վերաբերմունքը» բառերը, քանի որ այսօր աշխարհում ընդհանուր մշակույթի կարեւորագույն գումարելին՝ էկոլոգիական մշակույթը, դիտվում է որպես ոչ թե մշակույթի մեկ առանձին ուղղություն կամ դիտանկյուն, այլ մշակույթի նոր որակ, ամբողջական աշխարհի՝ գործնական ու ինտելեկտուալ-հոգեւոր, ընկալումից բխող արտացոլում: